

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ  
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ  
**ՈՐՈՇՈՒՄ**

№2020-4-4-Ա

ք. Երևան

29.07.2020թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2020 թվականի հուլիսի 29-ի նիստում քննարկեց 2020 թվականի հունիսի 12-ին արտոնագրային հավատարմատար Զարուհի Մանուկյանի կողմից ներկայացված՝ Կարեն Արտակի Բոյանի (Երևան, Շինարարների 10, բն. 27) բողոքը «LAVAIRWAYS» (No20191822) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.

Հայտում նշված՝ 39-րդ դասի բոլոր ծառայությունների համար բացի «ավիափոխադրումներ. ինքնաթիռի վարձույթ» ծառայություններից ապրանքային նշանը ենթակա չէ գրանցման, քանի որ 9-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի և ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի N 1017-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի (այսուհետ՝ կարգ) 93-րդ կետի 7-րդ ենթակետի համաձայն որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չէ այն նիշը, որը սպառողներին կարող է մոլորության մեջ գցել ապրանքների կամ ծառայությունների աշխարհագրական ծագման, դրանց որակի, բնույթի կամ արտադրողի վերաբերյալ հարցերում: Տվյալ դեպքում «airways» գրառումը ներառող ապրանքային նշանը չի կարող գրանցվել մնացած բոլոր ծառայությունների համար, քանի որ սպառողներին կարող է մոլորության մեջ ծառայությունների բնույթի և տեսակի վերաբերյալ հարցերում:

Կոլեգիայի նախագահը հիմք ընդունելով «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի դրույթները բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքը մասնակի բավարարելու, կրկնական փորձաքննության որոշումը մասնակի չեղյալ ճանաչելու և ապրանքային նշանը մասնակի գրանցելու մասին սահմանափակելով ծառայությունների ցանկը և թողնելով հայտում նշված այն ծառայությունները, որոնք առընչվում են ավիափոխադրումների հետ:

Բողոքարկողը համաձայն էր կոլեգիայի նախնական քննարկման արդյունքների հետ:

Փորձաքննության բաժնի պետը նույնպես չառարկեց:

Քննարկման արդյունքում համաձայնվելով կոլեգիայի նախնական կարծիքի հետ, և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը.

### **Ո Ր Ո Շ Ե Ց**

Արտոնագրային հավատարմատար Զարուհի Մանուկյանի կողմից ներկայացված «LAVAIRWAYS» (No20191822) բողոքը մասնակի բավարարել, կրկնական փորձաքննության որոշումը մասնակի չեղյալ ճանաչել և ապրանքային նշանը մասնակի գրանցել հետևյալ ծառայությունների համար՝ դաս 39. ավիափոխադրումներ. ավտոմոբիլային փոխադրումներ. ավտոբուսային փոխադրումներ. փոխադրումներ բեռնատար ավտոտրանսպորտով. երկաթուղային փոխադրումներ. փոխադրումներ գետային տրանսպորտով. փոխադրումներ ջրային տրանսպորտով. ուղևորային փոխադրումներ. ծովային փոխադրումներ. ապրանքների պահպանություն պահեստներում. ճանապարհորդական շրջագայությունների համար փոխադրումների կազմակերպում. տրանսպորտային ծառայություններ զբոսաշրջիկների համար. ինքնաթիռի և մեքենայի վարձույթ. ապրանքների փաթեթավորում. փոխադրում և առաքում՝ բոլոր վերը նշված ծառայությունները կապված ավիափոխադրումների ոլորտի հետ:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՆԱԽԱԳԱՀ

ՆԱԻՐԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ